ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԲԱԳՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

1. Դպրոցի առաքելությունը 5

1.1 Առաքելության իրագործման համար առկա ռեսուրսներ 6

1.2 Առաքելության իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներ 6

1.3 Առաքելության իրականացման համար էական ազդեցություն ունեցող ներքին և արտաքին գործոնները 7

1.4 Զարգացման ծրագրի իրավական հիմքերը 8

2. Տվյալներ դպրոցի մասին 9

3. Դպրոցի գործունեությունը 10

3.1 Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր) 12

3.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը 12

3.3 Աշակերտական համակազմը 14

3.4 Մանկավարժական համակազմը 16

4. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը 17

5. Դպրոցի գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները 25

6.Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտում նպատակները և առկա խնդիրները 30

7.Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները եվ խնդիրները, դրանց համապատասխան գործողությունները.....31

7.1 Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանը ուղղված գործողությունները.....31

8. Ակնկալվող արդյունքները 36

9. Ծրագրի իրականացման վերահսկողությունը 36

10. Եզրափակում 37

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 15.01.2021թ. «Պետական հանրակրթական

ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման

պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 16-Ն հրամանի

պահանջներին համապատասխան:

Ներածություն

ՀՀ Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) զարգացման 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Անի համայնքի և Բագրավան գյուղի կարիքները:

Դպրոցի զարգացման ծագիրը կազմելու համար նախ անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ ինչ է ծրագիրը և ինչ գործոններ են պետք հաշվի առնել ծրագրի կազմման և իրականացման ժամանակ:

Ծրագրի հիմնական նպատակը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կունենա իր նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

Դպրոցի գործունեության պլանավորումը բաժանվում է հետևյալ փուլերի՝

- դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ նպատակների և խնդիրների սահմանում,
- ծրագրի իրականացման համար առկա և անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,
- ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների կազմում:

ՀՀ Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի մշակման համար կատարված են հետևյալ հաջորդական քայլերը՝

- սահմանվել է դպրոցի առաքելությունը
- վերլուծվել է առկա իրավիճակը, ներկայացվել են առկա հիմնախնդիրները
- սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները
- մշակվել են հիմնական նպատակների կատարման համար
- անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները
- սահմանվել և գնահատվել են եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
- սահմանվել է ֆինանսատնտեսական գործունեությունը:

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտների որակյալ կրթությունը և մասնագիտական կողմնորոշումն ապահովելն է:

1. Դպրոցի առաքելությունը

Հանրապետությունում որպես կրթության բնագավառի գերխնդիր կարևորվում է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունը, որը և հանդիսանում է դպրոցի հիմնական առաքելությունը:

Դպրոցի առաքելությունն է՝ ապահովել.

- սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու
- իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը
- սովորողին տալ հիմնարար գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,
- կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը
- ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակություն:

Այս և նմանատիպ այլ առաքելությունների իրականացման ճանապարհին կարևոր է կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: Արդի դարաշրջանը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Իսկ այդ փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

1.1 Առաքելության իրագործման համար առկա ռեսուրսներ

- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ
- սովորողի կրթական կարիքի գնահատում
- սովորողների մտավոր զարգացման պայմաններ
- սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ
- փորձառու մանկավարժական համակազմ
- կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումներ՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ
- արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն)։

1.2 Առաքելության իրագործման համար անհրաժեշտ ռեսուսրներ

- Մարդկային ռեսուրսներ
  - Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում՝ վերապատրաստումների, դասընթացների և այլ մեթոդների կիրառմամբ
  - մանկավարժական համակազմի համալրում նոր փորձառու կադրերով։
- Նյութատեխնիկական բազա
  - Համակարգչային բավարար քանակի ապահովում
  - ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում / պրոյեկտոր, սմարթ գրատախտակ, տպիչ սարք/
  - ՏՀՏ ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում։

- Ֆինանսական ռեսուրսներ
    - լրացուցիչ վճարովի ծառայությունների կազմակերպում
    - հովանավորների և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցում:

1.3 Առաքելության իրականացման համար էական ազդեցություն ունեցող ներքին և արտաքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են՝

- առաքելության իրագործման գործընթացում ծնողական խորհրդի, կառավարման խորհրդի, ղեկավարման մարմինների, համայնքի, հասարակության ակտիվ խմբերի ակտիվ ներգրավումը
- առկա մարդկային և նյութական ռեսուսների արդյունավետ օգտագործումը
- արդյունավետ ղեկավարումը

Ներքին գործոնները լինում են նաև բացասական ՝

- առաքելության նկատմաբ թերահավատությունը
- կրթական գործընթացի մասնակիցների պասիվ լինելը
- վարչական և մանկավարժական համակազմի հմտությունների պակասը
- միանձնյա և ոչ թափանցիկ ղեկավարումը:

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են՝

- Պետության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը
- լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը
- պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը :

Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններն լինում են բացասական՝

- համաճարակներով պայմանավորված սահմանափակումները
- հասարակության մեջ դպրոցի նկատմամբ ձևավորված կարծրատիպերը

- դրական արտաքին գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը:

1.4 Զարգացման ծրագրի իրավական հիմքերը

‹‹Բագրավանի միջնակարգ դպրոց›› ՊՈԱԿ-ի առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝

1. ՀՀ Սահմանադրություն
2. « Կրթության մասին» ՀՀ օրենքը
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
4. «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը
5. «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքը
6. «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը
7. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը
8. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
9. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
10. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»
11. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիր
12. Ուսումնական հաստատության կանոնադրությունը
13. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան

‹‹Բագրավանի միջնակարգ դպրոց›› ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները:

«Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Անի համայնքի Բագրավան գյուղի և դպրոցի առանձնահատկությունները:

2. Տվյալներ դպրոցի մասին

ՀՀ Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական նախադպրոցական, տարրական, հիմնական ընդհանուր, և ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության /այսուհետ՝ Հիմնադիր/:

- Դպրոցը հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 48.210.00180, վկայականի համարը 03Ա-057726, ծածկագիր 10020268
- Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 11.01.2017 թվականին, գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Անիի տարածքային բաժնի կողմից:
- Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով, հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:
- Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
    - ✓ Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝ Նախադպրոցական /լիցենզիա Ա №0361/, սահմանային թիվը՝20

- ✓ Տարրական ընդհանուր /լիցենզիա Ա №0932/ սահմանային թիվը՝48
- ✓ Հիմնական ընդհանուր /լիցենզիա Ա №0935/, սահմանային թիվը՝52
- ✓ Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն /լիցենզիա Ա №0756/, սահմանային թիվը՝ 30

- Դպրոցում աշխատում են 31 աշխատակից, որից՝ 4 վարչական, 23 մանկավարժական, 8 ուսումնաօժանդակ և սպասարկող աշխատակից
- Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ Անի համայնք գյուղ Բագրավան 6 փողոց, 8 շենք
- Դպրոցն հիմնադրվել է 1973 թ.
- Դպրոցի շենքը կառուցվել է 1973 թ
- Դպրոցը աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

- մանկավարժական խորհուրդ- ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները
- աշակերտական խորհուրդ -ընդգրկված են 6-12-րդ դասարաններից երկուական սովորող
- ծնողական խորհուրդ- ընդգրկված են դպրոցի 1-12-րդ դասարանների ծնողական խորհուրդների նախագահները:

3. Դպրոցի գործունեությունը

21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) քաղաքացու ձևավորումն է. Զինված՝ գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրենասեր:

Վերոնշյալ գործընթացի կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որն առաջարկում է կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տալիս լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և հնարավորություններ ստեղծելու հետագա զարգացման

համար: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում որպես կրթության բնագավառի գերխնդիր, կարևորվում է կրթության որակի բարձրացումը:

Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը՝ կրթության բնագավառում:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է.

- սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ և ձևավորել համարձակ երազող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ
- երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի: Սովորողը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալել
- ստեղծել պայմաններ սովորողների ուսումնահետազոտական աշխատանքների համար, կարևորելով գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառելու հմտությունները
- ԿԱՊԿՈՒ աշակերտի համար իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթության միջավայրի ապահովում
- նպաստել սովորողների հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանը, որը ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբում աշխատելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողունակություններ:

Մեր ուսումնական հաստատության տեսլականն է՝ քաղաքակիրթ, ստեղծագործ և ստեղծարար, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ, ժամանակին համահունչ քայլող սերնդի «թողարկումը», որն իր մեջ կկրի հայրենասեր ու խելացի քաղաքացու բարձրագույն, ինչպես նաև համամարդկային մնայուն արժեքները: Մեր գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

3.1 Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր)

Առկա դպրոցի շենքը կառուցվել է 1973թվականին, բաղկացած է 1 մասնաշենքից ՝ երկհարկ է:

Դպրոցում այս պահին գործում է 12 դասասենյակ, կա 1 վարչական սենյակ, 1 համակարգչային լսարան, 1 գրադարան, 1 մարզադահլիճ, 1 միջոցառումների դահլիճ,1 նախնական զինպատրաստության սենյակ, 1 ճաշարան, 4 սանհանգույց:

Դպրոցի մարզադահլիճը, միջոցառումների դահլիճը և գրադարանը կարիք ունեն վերանորոգման, նախատեսվում է առանձնացնել լաբորատորիա , մեթոդական կաբինետ:

3.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- կոմունալ վճարներ
- գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- կապիտալ ծախսեր
- հատուկ նպատակային ծախսեր
- այլ ծախսեր:

Դպրոցի ֆինանսավորման աղբյուրը, մինչև 01.09.2023թ-ը, պետական բյուջեից հատկացված սուբսիդիան է՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից: Նոր ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022թ-ի թիվ 79-Ն «Հանրակրթական ուսումնական

հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» հրամանով:

2019-2023թթ-ի հաստատված ֆինանսատնտեսական հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կատարել ենք դպրոցի վերոնշյալ ժամանակահատվածի գործունեության ամփոփ վերլուծություն.

Գծապատկեր 1



Վերլուծությունը ցույց է տալիս, որ չորս տարվա միջին հաշվարկով պետական բյուջեից ստացված ֆինանսավորման 90,9%-ը բաժին է հասնում աշխատավարձին, 2,7%-ը՝ ջեռուցման և կոմունալ ծախսերին, 1,3%-ը՝ սննդին: Բյուջեի միայն 5,1%-ն է ուղղվում դպրոցի կարիքների համար մնացած ծախսերին:

3.3 Աշակերտական համակազմը

2023-2024 ուստարում դպրոցում սովորում է թվով 98 աշակերտ: Նախորդ 2 տարիների համեմատ նվազել է աշակերտ թիվը, պատճառը համայնքի բնակչության թվի կրճատումն է: Այս ուստարում առաջի դասարան են ընդունվել թվով 6 աշակերտ:

Դպրոցում կոմպլեկտավորվել է 12 դասարան, երկկոմպլեկտ դասարանն չունենք: Կատարված վերլուծությունը գրաֆիկորեն ներկայացված է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2



Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական համակազմի աշխատանքը, այդ մասին են վկայում նաև ներքին գնահատման շրջանակներում արված հարցումները:

Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ:

Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան
- Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը,
- Պարբերաբար կատարվում են դասալսումներ
- Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, ուսուցման բովանդակության փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու եղանակները:

Նախորդող չորս տարիների 36 շրջանավարտներից 21-ը ընդունվել և ուսումը շարունակում են հանրապետության տարբեր բուհերում (շրջանավարտների ընդհանուր թվի 58,3%- ը) / տե՛ս գծապատկեր 3/:

Գծապատկեր 3



Համընդհանուր ներառական կրթության իրականացման նպատակով ընդունվել են աշխատանքի հոգեբան և ուսուցչի օգնական:

Կատարվել է դպրոցական և տարածքային մակարդակի գնահատում Արթիկի

տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի /ՏՄԱԿ/, դպրոցի բազմամասնագիտական թիմի և մանկավարժների կողմից: Վկայագրվել են երկուսը ինտելեկտուալ /մտավոր/ միջին խանգարումներով, մեկը ինտելեկտուալ /մտավոր/ թեթև խանգարումներով: Վերոհիշյալ բոլոր սովորողների ուսուցումը իրականացվել է ԱՈՒՊ-ներով:

3.4 Մանկավարժական համակազմը

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Հինգ ուսուցիչ մասնակցել են կամավոր ատեստավորման և հաղթահարել անցողիկ շեմը 80 % և ավելի տոկոսով:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի: Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով: Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են մեկ դրույքաչափով:

Դպրոցում գործում են բնագիտական առարկաների, հումանիտար առարկաների և տարրական դասարանների մեթոդմիավորումները՝ ըստ իրենց գործառույթների:

Գծապատկեր 4



4. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցի զարգացման համար նախատեսված նպատակներն ու խնդիրները վեր հանելուց առաջ անհրաժեշտ պայման է կատարել իրավիճակի վերլուծությունը՝ նշելով ուժեղ և թույլ կողմերը: Սա մեր կողմից կատարված ստույգ վերլուծություն է, քանի որ նախորդ տասը տարիների ընթացքում եղել եմ սույն ՊՈԱԿ-ի տնօրենը և մեր աշխատանքային թիմի հետևողական աշխատանքի շնորհիվ է, որ դպրոցն ունի ներքոհիշյալ ուժեղ կողմերի գերակշիռ մասը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ*
• Դպրոցը երկհարկանի է, կառուցվել է 1973թ-ին և ունի բավարար շենքային պայմաններ, ունի պահուստային ելքեր,	• Դասասենյակները ջեռուցվում են էլեկտրական տաքացուցիչներով: Ձմռանը ֆիզկուլտուրայի դասերը իրականացնում ենք

թեքահարթակ, դռներն ու պատուհանները փոխվել են 2022թ-ին: • Դպրոցն ունի մարզադահլիճ /147 քառ. մետր/ ճաշարան, խոհանոց, «Արմաթ» լաբորատորիա, գրադարան: Խոհանոցը և ճաշարանը վերանորոգվել և կահավորվել է 2022թ-ին: • 16,6 քառ. մետր տարածքն առանձնացված է ցանկապատով, տարածքն ունի սպորտհրապարակ • Դպրոցը ունի զինանոց և ուսումնական զենք:	դասասենյակներում՝ դահլիճի չջեռուցելու պատճառով: Համայնքը գազաֆիկացված է, սակայն դպրոցը դեռևս գազաֆիկացված չէ: • Շենքն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք: • Չկա կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիա և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: • Չկա ընթերցասրահ, վերահրատարակված գրքերի քանակը շատ փոքր թիվ է կազմում: • Մարզադահլիճը չունի բավարար գույք՝ պարապմունքերի պատշաճ իրականացման համար: • Չունի նկուղ և հրաձգարան: • Սպորտհրապարակն ունի բարեկարգման կարիք: • Դասասենյակների քանակը քիչ է, ինչը թույլ չի տալիս որոշ ծրագրեր իրականացնել:
Նյութատեխնիկական բազան	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*

• Դպրոցն ապահովված է բավարար քանակությամբ ամբողջովին նոր սեղան-նստարաններով: Վերջիններս ձեռք են բերվել 2022 թվականին: • Ունի 2 տպիչ սարք, բարձրախոս համակարգիչներ և պրոյեկտոր, 3 նեթբուք:	• Առկա համակարգիչների և համակարգչային տեխնիկայի քանակը բավարար չէ: • Նեթբուքները բավականին հին մոդել են և դժվարությամբ են աշխատում:
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ***
• Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը / կազմված Անի կայարանի, Անիպեմզայի, և Բագրավանի միջնակարգ դպրոցների/ որի գործունեությունը ուղղված է դպրոցի զարգացմանը, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: • Խորհրդի կողմից հավանության արժանացած զարգացման ծրագիրը ըստ կարգի քննարկվել է խորհրդի նիստում, վեր հանվել կատարված և չկատարված աշխատանքները, պարզաբանվել է չիրականացված	• Չունի շրջանավարտների խորհուրդ: • Չունի հոգաբարձուների խորհուրդ: • Ծնողխորհուրդը նախաձեռնությունների հարցում պասիվ է : • Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մ-ների հետ:

աշխատանքների պատճառները և տրվել որոշումներ դրանց իրականացման համար։ • Մանկավարժական խորհուրդը կազմված է փորձառու և որակյալ մասնագետներից և ծնողական խորհրդի նախագահից։ • Ակտիվորեն գործում է աշակերտական խորհուրդը Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և աջակցում դրանց իրագործմանը։ • Դպրոցում գործում են առարկայական 3 մասնախմբեր / բնագիտական առարկաների, հումանիտար առարկաների, տարրական դասարանների/, որոնք ամիսը առնվազն մեկ անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքերը։	
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	
ՌԻԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
Դպրոցն համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ	Բարեգործական կազմակերպությունների հետ կապ, որոնք լուրջ ֆինանսական ներդրումներ

նախարարության, Շիրակի մարզպետարանի, Անիի համայնքապետարանի, ԿՏԱԿ-ի ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, Շիրակի պետական համալսարանի, «Այբ» կրթահամալիրի, Արթիկի ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ N զորամասի մեր դպրոցի շրջանավարտների և կրթական ծրագրեր իրականացնող տարբեր հասարակական կազմակերպությունների և անհատների հետ:	կունենան դպրոցի շենքային պայմանների էական բարելավման և նյութատեխնիկական բազայի համալրման գործում:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ***
• Դպրոցը, լինելով համայնքում միակը, բացի ուսումնական պլանով նախատեսված աշխատանքներից կատարում է նաև համայնքի գեղագիտական զարգացման և կրթամշակութային կենտրոնի պարտականությունները: • Համագործակցելով ԿԶՆԱԿ-ի հետ՝ դպրոցը մասնակցել է << Իմ կյանքը համայնքում >> ծրագրին՝ հյուրընկալելով ՀՀ Արարատի մարզի <<Սուրենավանի միջակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի թվով չորս աշակերտների:	• Ուսումնական միջավայրն ավելի գրավիչ և արդյունավետ դարձնող շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի անբավարարություն: • Համակարգչային տեխնիկայի քիչ քանակություն:

• 2015թ-ից դպրոցում գործում է «Արմաթ» լաբորատորիան, որտեղ հաճախում և իրենց գիտելիքներն են զարգացնում դպրոցի աշակերտները: • Դպրոցում համայնքի աջակցությամբ գործում է պարի, նկարչության տիկնիկային թատրոնի խմբակները: • Դպրոցում գործում է նաև Թատերական և մասնագիտական կողմնորոշման խմբակներ:	
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ***
• Դպրոցը ուսումնադաստիարակչական գործընթացը փորձում է կազմակերպել աշակերտակենտրոն մոտեցմամբ: • Դպրոցն համալրված է բարձրագույն կրթություն ունեցող որակյալ մանկավարժներով, ովքեր պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող վերապատրաստումների, սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան	• Ուսուցիչները չունեն տարակարգ • Դպրոցը ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող << Տարվա լավագույն ուսուցիչ >> մրցույթին մասնակից ուսուցիչ չունի: • Միջազգային գիտաժողովներին մասնակցության բացակայություն • Ուսուցիչների զգալի մասը դեռևս լիարժեքորեն չի տիրապետում նոր ՀՊՉ-ին և դրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին:

վկայականներ, հավաստագրեր: Ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ են կիրառում դասապրոցեսին: • Ուսուցիչներից 5-ը հաղթահարել են կամավոր ատեստավորման 80% -ի շեմը և ստացել հավելավճար: • Կատարում են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: • Պահպանում են առողջ մթնոլորտ, արժեքային միջավայր, պահպանում են դպրոցի ներքին կանոնները, մասնակցում են դպրոցի ներքին գնահատմանը: • Կազմակերպում և մասնակցում են համայնքային միջոցառումներին:	• Ուսուցիչների մի մասը դժվարությամբ է կիրառում ՏՀՏ-ները:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
• Դպրոցի առաքելությունն է՝ ապահովել, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել աշխատանքային գործունեության:	• Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության ցածր թիվ: • Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բացակայությունը ամենօրյա դասապրոցեսի ժամանակ / պատճառը համապատասխան

• 2019թ-ից հաջողությամբ իրականացնում է ներառական կրթություն: • Դպրոցի կրթության որակի մասին է խոսում բուհ ընդունվողների մեծ թիվը 2018-2022թթ-ի ընթացքում 36 շրջանավարտներից 21-ն ընդունվել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:	սարքավորումների քիչ քանակությունը/: • Ներառական կրթության վերաբերյալ ծնողների և աշակերտների ոչ բավարար տեղեկացվածությունը:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	***ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ***
• Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ: Առկա է ինտերնետ կապը:	• Համակարգիչների և համակարգչային տեխնիկայի խիստ պակաս կա: Ինտերնետ կապը հասանելի չէ դպրոցի ամբողջ տարածքում: • Ուսուցիչների մասը դժվարությամբ է ՏՀՏ օգտագործում :

5. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Իրավիճակի վերլուծությունը շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար: Վերլուծության համար հիմք են հանդիսացել նախորդ 3 տարիների ընթացքը և դպրոցի գործունեության ներքին գնահատման վերջին 3 ուսումնական տարիների հաշվետվությունների արդյունքները:

Նախորդ 3 տարիների ընթացքում կատարված աշխատանքները

Ոլորտը	***Իրականացված աշխատանքները***
Դպրոցի շենքային պայմաններ	բարեկարգվել է բակը, դպրոցի տարածքը ցանկապատվել է:
	Փոխվել են դպրոցի շենքի բոլոր պատուհանները և դռները:
	Վերանորոգվել է դպրոցի ճաշարանը և համալվել նոր գույքով
	Դասասենյակներում տեղադրվել են ամբողջությամբ նոր գույք՝ աշակերտական սեղան, աթոռ , ուսուցչի սեղան և աթոռ
Նյութատեխնիկական բազա	Դպրոցն ունի արմաթ լաբորատորիա, 3 նեթբուք, 2 տպիչ սարք , 2 համակարգիչ
	Դպրոցի անհրաժեշտ մասերում՝ մուտքի մոտ, միջանցքներում, տեղադրված են տեսախցիկներ
	Գրադարանը համալրվել է նոր գեղարվեստական գրքերով
Դպրոցի առաջընթացը	
Հեռավար կրթության ապահովում՝ ըստ անհրաժեշտության, միասնական կրթական հարթակի՝ MS Teams-ի կիրառությամբ	

Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/bagravanidproc	
Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ	Բոլորն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում
	Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են դպրոցում դասավանդելու չափանիշներին
	5 ուսուցիչները մասնակցել են կամավոր ատեստավորման և հաղթահարել անցողիկ շեմը 80% և ավելի:
Ժողովրդավարական սկզբունքների կարևորում	Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ:
	ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, անցկացնում միջոցառումներ՝ ուղղված աշակերտների իրավունքների և պարտականությունների ճանաչմանը:
Դպրոցի համագործակցային դաշտ	Դպրոցն ակտիվորեն համագործակցում է Անի համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին, կազմակերպում է ավանդական միջոցառումներ, տոներ, ծեսեր՝

	ներգրավելով Բագրավան գյուղի բնակչությանը:
Դպրոցի ակտիվությունը	Մասնակցություն հանրապետական, մրցույթների «Կենգուրու» , «KOREEZ» և «Մեղու» հանրապետական մրցույթներին
	Մասնակցություն ԿԶՆԱԿ հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Իմ կյանքը համայնքում -4 » աշակերտների փոխանակման ծրագրին:
	Մշակութային և սոցիալական բնույթի արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ՝ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, բանավեճեր, բաց դասեր
	Հիշատակի և խոնարհման երթեր՝ Ծիծեռնակաբերդ, Հաղթանակ զբոսայգի, Եռաբլուր, թանգարաններ և մշակութային այլ կենտրոններ:

Հաջորդ 5 տարիների ընթացքում նախատեսվող աշխատանքներ

<table>
<tr><td rowspan="7">Դպրոցի շենքային պայմաններ</td><td colspan="2">Հետևողական լինել դպրոցի դասասենյակների վերանորոգման գործընթացին: Ջեռուցման համակարգի տեղադրմանը:</td></tr>
<tr><td rowspan="6">Սովորողների մոտիվացիայի և նպատակադրման, ներպրոցական կյանքի ակտիվացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում</td><td>դասասենյակների համալրում նոր գույքով, դիդակտիկ նյութերով</td></tr>
<tr><td>Համակարգչային լսարանի կահավորում, համակարգչային տեխնիկայի, էլեկտրոնային գրատախտակների համալրում</td></tr>
<tr><td>Կահավորել ժամանակակից գրադարան (նաև առցանց) և ընթերցասրահ</td></tr>
<tr><td>Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համալրում ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով , աշխարհագրության վերաբերյալ ուսումնական նյութերով, քարտեզներով, գլոբուսներով</td></tr>
<tr><td>Սպորտային դահլիճի կահավորում և վերանորոգում: Մարզասրահի և հանդերձարանի կահավորում:</td></tr>
<tr><td>Սպորտհրապարակի բարեկարգում:</td></tr>
</table>

		Այգու և ջերմոցի հիմնում:
		Հոգեբանի և ուսուցչի օգնականի աշխատանքների առավել արդյունավետ իրականացման համար աջակցության սենյակի հիմնում, կահավորում և համալրում անհրաժեշտ նյութերով, խաղերով, պաստառներով:
Ուսումնական գործընթաց	ՏՀՏ կարողությունների զարգացում, ԷԿՌ ռեսուրսների ընդլայնում	
	Ժամանակակից կրթական մոտեցումների ու տեխնոլոգիաների խթանում, զարգացում	
	Ներդպրոցական վերահսկողության դրույթների թարմացում, ուժեղացում, նոր փաթեթների, ձևաթղթերի, փաստաթղթերի ներդրում՝ դպրոցի կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին համապատասխան:	
Կադրային քաղաքականություն	Ուսուցիչների վերապատրաստումներ, ատեստավորման միջոցով աշխատավարձի բարձրացում	
	Նոր, փորձառու, այդ թվում՝ երիտասարդ, կադրերով համալրում	

6. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտում նպատակները և առկա խնդիրները

ՈԼՈՐՏ	*ԽՆԴԻՐ*
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Արտաբյուջետային միջոցների ստեղծում:
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Շրջանավարտների խորհրդի ստեղծում:
	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում:
Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով:
Աշակերտական համակազմ	Կարողունակ քաղաքացիների ձևավորում:
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Համագործակցությունների շրջանակի ընդլայնում:
Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու

	արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում:
	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում:
Տեխնոլոգիաներ և նորարարություն	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում: Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում:
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

7. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները եվ խնդիրները, դրանց համապատասխան գործողությունները:

7.1 Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանը ուղղված գործողությունները

1. ***Ոլորտը՝*** ***Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան***
   Նպատակը՝ Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը
   Խնդիրը՝ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:

Ռիսկերը ՝

- ✓ Աշակերտ թվի քիչ աճը
- ✓ Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները ՝

- ✓ Դպրոցի առօրիայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի լուսաբանումը դպրոցի կայքէջերում
- ✓ Համագործակցություն Անի համայնքի մյուս դպրոցների հետ
- ✓ Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար

2. Ոլորտը՝ *Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը*

Նպատակը՝ Ֆինանսական միջոցների աճ

Խնդիրը՝ Արտաբյուջետային միջոցների ձևավորում

Ռիսկերը՝

- ✓ Ոչ բավարար տնտեսումները
- ✓ Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
- ✓ Համայնքում գործող իրավաբանական անձանց հետ համագործակցություն ձեռք չբերելը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը
- ✓ Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար

3. ***Ոլորտը*** ՝ *Կառավարման և խորհրդակցական մարմիններ*

Նպատակը՝ Խորհրդակցական մարմինների ընդլայնում, նրանց միջև համագործակցությունը և դպրոց-համայնք կապը խթանելու նպատակով

Ռիսկերը՝

- ✓ Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում

4. ***Ոլորտը՝*** *Մանկավարժական համակազմը*

Նպատակը՝ Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում՝ նպաստելու ուսուցման որակի բարելավմանը

Խնդիրը՝ Համակազմի համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում

Ռիսկերը՝

- ✓ Ուսուցիչների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Նպաստել ուսուցիչների մասնակցությանը վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ տանելուն

5. Ոլորտը՝ *Աշակերտական համակազմը*

Նպատակը՝ Կարողունակ քաղաքացիների ձևավորում

Խնդիրը՝

- ✓ Սովորողների մոտիվացիայի խթանում
- ✓ Ուսումնառության որակի բարելավում
- ✓ Աշակերտական ինքնավարության խթանում
- ✓ Արժեհամակարգի ձևավորում
- ✓ Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցություններ՝ շրջանակների լայնացում

Ռիսկերը՝

- ✓ Աշակերտների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Նպաստել աշակերտների ակտիվացման բարձրացմանը՝ ստեղծելով համապատասխան միջավայր և պայմաններ

6. Ոլորտը՝ *Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ*

Նպատակը՝ Կարողունակ և հասարակությունում ինտեգրված քաղաքացիների ձևավորում

Խնդիրը՝ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում

Ռիսկերը՝

- ✓ Համայնքի պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Իրազեկել համայնքին, ապահովել ակտիվ ներգրավվածությունը, կարևորել դպրոց-համայնք կապը

7. ***Ոլորտը՝*** *Ուսումնական միջավայր*

Նպատակը՝ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծման և միջոցով նպաստել ուսման որակի բարձրացմանը

Խնդիրը՝ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծում և շարունակական զարգացում:

Ռիսկերը՝

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- ✓ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը

8. Ոլորտը՝ *Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների*

Նպատակը՝ Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում

Խնդիրը՝

- ✓ Վերջնարդյունքների գնահատում. մնացորդային գիտելիքի ստուգում

- ✓ Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում

9. Ոլորտը՝ *Տեխնոլոգիաները և նորարարությունը*

Նպատակը՝ Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

Խնդիրը՝ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում:

Ռիսկերը՝

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները
- ✓ Ուսուցիչների պասիվությունը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
- ✓ Մոտիվացնել, խրախուսել ուսուցիչներին

Ոլորտը՝ *Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր*

Նպատակը՝ Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին

Խնդիրը՝ Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը

8. Ակնկալվող արդյունքները

- Հրապուրիչ և որակյալ կրթական համակարգ
- Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած դպրոց
- Փորձառու մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
- Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն
- ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում
- Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
- Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն
- 21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի:

9. Ծրագրի իրականացման վերահսկողությունը

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ):

Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո:

Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին:

10. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է նախորդ տարիներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը: Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: